Գլիցերին **1.0** գ և **2.11** գ

Դեղաձևը: Ուղիղաղիքային մոմիկներ:

Բաղադրություն**.** Յուրաքանչյուր մոմիկ պարունակում է՝ Ակտիվ բաղադրատարր՝ գլիցերոլ 2.11 գ կամ 1.0 գ:
Օժանդակ նյութեր. նատրիումի ստեարատ, ժելատին, ջուր:

Դեղաբանական խումբ**.** Լուծողական:

Դեղաբանական ազդեցություն
Լուծողական, փափկեցնում և պատում է կուտացած կղազանգվածը, հեշտացնում է անցումը հաստ աղիքով, ցուցաբերում է գրգռող ազդեցություն աղիների լորձաթաղանթի վրա, խթանում է աղիների ռեֆլեկտոր գործունեությունը:

Կիրառման ցուցումներ
Տարբեր ծագման փորկապություն սիմպտոմատիկ բուժում:
Փորկապության պրոֆիլակտիկա այն հիվանդների մոտ, որոնք չեն կարողանում ուժ գործադրել արտազատման ժամանակ:
Թրոմբային թութք, հետանցքի ճաքեր, կամ հարհետանցքային բորբոքում, անորէկտալ ստենոզ:

Հակացուցումները
Գերզգայունություն բաղադրատարրերի նկատմամբ, աղիների անանցանելիություն, թութք՝ սրացման փուլում, ուղիղ աղիքի բորբոքային հիվանդություններ և ուռուցք, պրոկտիտ, պարապրոկտիտ, որովայնի չախտորոշված ցավ:

Կիրառման ձև և դեղաչափում
Մեծահասակներ: 1-2 մոմիկ 2.11 գ ըստ անհրաժեշտության
Երեխաներ: 1 մոմիկ 1.0 գ ըստ անհրաժեշտության
Հարկավոր է պահել մոմիկը ուղիղ աղիքում, որքան հնարավոր է երկար, մինչև արտազատումը:

Կողմնակի երևույթներ
Ալերգիկ ռեակցիաներ, տեղային ռեակցիաներ՝ (մաշկի քոր և գրգռվածություն): Երկարատև օգտագործման դեպքում – կղազանգվածի դուրսբերման ֆիզիոլոգիական ակտիվության թուլացում:

Նախազգուշացումներ
Չի թույլատրվում Գլիցերին մոմիկների սիստեմատիկ կիրառում:

Բուժումը դադարեցվում է աղիների բնականոն աշխատանքի վերականգնումից հետո:

Մոմիկները չպետք է կիրառվեն սուր որովայնային ցավի ժամանակ:

Դեղը կիրառում են միայն ուղիղաղիքային ճանապարհով, նախատեսված չէ ներքին ընդունման համար:

Կիրառել զգուշությամբ երիկամային անբավարարության դեպքում:

Հղիություն և կրծքով կերակրում

Գլիցերինի մոմիկների կիրառման անվտանգությունը հղիության և կրծքով կերակրման ժամանակ ապացուցված չէ: Կիրառումը հղիության և կրծքով կերակրման ժամանակ միայն բժշկի ցուցումով

Փոխազդեցություն այլ դեղերի հետ:

Զգուշությամբ պետք է տրվի միզամուղների, կալիում –նվազեցնող դեղերի և հանքային յուղերի հետ:

Թողարկման ձև

5 ուղիղաղիքային մոմիկներ խցիկում: 2 խցիկ և ներդիր թերթիկ ստվարաթղթե տուփի մեջ:

Պիտանիության ժամկետ

3 տարի:

Պահպանման պայմաններ

Պահպանել 25°C ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում: Չսառեցնել:

Պահել երեխաներից հեռու:

Բացթողման կարգ

Առանց դեղատոմսի: